

Հ Ա Յ Կ Ա Խ Ա Ն Խ Ա Տ
Խ Ս Հ Հ Ո Վ Վ Ո Վ Ո Մ Ո Տ
Ա Ե Ա Մ Ն Ա Պ Ա Հ Ա Կ Ա Ն Փ Ո Ր Չ Ա Կ Ա Ց Ա Ն
Լ Ո Ռ Ո Ւ Հ Ե Ն Ա Կ Ե Տ

Ա. Կ. ՊԱՎԼՈՎԻԶ

ՏԵՂԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ
ՀԱՎԱՔԵԼԸ, ՊԱՀԵԼԸ ՅԵՎ ԱՏԵՓԱՆԱՎԱՆԻ
ՇՐՋԱՆԻ ԽՈՏՀԱՐՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ

631
Դ-27

ԳՅՈՒՂՂՐԱՑ

1937

ՅԵՐԵՎԱՆ

30 JUL 2010

17 JUL 2013

Հ Ա Յ Ի Ո Ւ Թ Ե Խ Ա Հ Ա Յ Ի Շ Ա Մ Ա Տ Ա Յ
Ա Ն Ա Ս Ն Ա Պ Ա Հ Ա Կ Ա Ն Փ Ո Ր Չ Ա Կ Ա Յ Ա Ն
Լ Ա Բ Ո Ւ Տ Ա Ե Ն Ա Կ Ե Տ

631
Դ-27

Ա. Կ. ՊԱՎԼՈՎԻԶ

ՏԵՂԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԵՐԻ
ՀԱՎԱՔԵԼԸ, ՊԱՀԵԼԸ ՅԵՎ ԱՏԵՓԱՆԱՎԱՆԻ
ԵՐԶԱՆԻ ԽՈՏՃԱՐՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՍԴՐԵԼԸ

1010
42422



ՏԵՂԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԴԵՐԸ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Ստեփանավանի շրջանում անասունների մսուրացին պահպանման համար կերի հիմնական մասսան ստացվում է բնական խոտհարքներից:

Խոտհարքները բարելավելու գործը մինչև որս կազմակերպված չի և խոտհարքների նկատմամբ վոչ մի խնամք չի տարվում: Խոտհարքները մեծ մասսամբ տալիս են հեկտարին 6—10 ցենտներ խոտ:

Շրջանում ներկայիս ստացվող խոտի բերքն ամենին չի բավարարում յեղած անասունների պահանջը: Իսկ յեթե մենք խոտհարքները բարելավելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ կիրառենք, բնական խոտհարքների արդյունավետությունը 3—4 անգամ կրաքրանա, և մենք կկարողանանք միանգամայն բավարարել շրջանի աճող սոցիալիստական անասնապահության ամքող անասունների խոտի պահանջը: Խոտհարքների բերքատվությունը բարձրացնող մի շարք միջոցառումների շարքում գլխավոր դերը պատկանելու յեներտնտեսային պարարտանյութերի, այն եւ յուրաքանչյուր անասնապահական տնտեսության մեջ ստացվող գոմաղբի, կոյաջրի¹⁾ աթարի մոխրի ոգտագործմանը:

Շրջանի խոտհարքների բերքատվությունը բարձ-

*) մեղոխառն, ջրիկ գոմաղբ, գոմաղբախյուր. ծր. քարգմանչի

С. К. ПАВЛОВИЧ

О накоплении, хранении и применении местных удобрений в Степанаванском районе

բացնելու գործում առանձնապես մեծ նշանակություն
ունի գոմաղբով պարարտացնելը: Հողին գոմաղբ տալիս
վերադաշվում են գլխավոր սննդարար տարրերը
(ազոտ, ֆոսֆոր, կալիում, կալցիում) և մացփում են
մեծ թվով որգանական նյութեր, վոր տնհրաժեշտ են
բույսի աճելու և հողի պտղաբերությունն ավելացնելու
համար:

Գոմաղբը վոչ միայն բարձրացնում է խոտհարք-
ների բերքը, այլև, շնորհիվ խոտի կաղմի մեջ այլազգի
բույսերի պակսելու և թիթեռնածովկավոր բույսերի
ավելանալու, լավացնում է խոտի վորակը:

Խոտհարքը գոմաղբով պարարտացնելու համար կուռու
հենակետի դրած փորձը ցույց է տվել, վոր գոմաղբի
աղեցցությունից խոտի բերքն զգալի չափով ավելա-
նում է:

Ստորև բերած աղյուսակը լուսաբանում է վերո-
հիշյալը:

Գոմաղբ՝ տոններով, հեկ- տարին	Խոտի բերքը մեկ հեկ- տարից (ցենտներով)				4 տարում 1 հեկ- տարին ավելա- նում
	1933	1934	1935	1936	
Առանց պարարտացնելու	9,5	13,7	9,6	12,7	—
Հեկտարին 10 տոն գոմաղբ	13,0	17,7	10,2	15,0	10,4
Հեկտարին 20 տոն գոմաղբ	15,7	21,2	12,2	17,5	21,1
Հեկտարին 30 տոն գոմաղբ	18,8	26,2	14,7	18,6	32,8

1933 թ. Սարատովի «Կոյեկտիվ աշխատանք» կոլ-
տնտեսության բավականին մեծ արդածություն ունե-
ցող խոտհարքների վրա գործադրած գոմաղբը խոտի

բերքի զգալի բարձրացում տվեց: Գոմաղբով պարար-
տացրած խոտհարքի խոտի բերքը հեկտարից 35 ցենտ-
ների յեր հասնում, այնինչ չպարարտացրածինը հեկ-
տարից 9—10 ցենտների գժվարությամբ եր հասնում:

Չնայած խոտհարքների բերքատվության բարձ-
րացման գործում գոմաղբով պարարտացնելու հսկայա-
կան նշանակության, շրջանի կոլտնտեսությունների
մեծ մասի մեջ գոմաղբի տնտեսությունը ծայրաստիճան
անբավարար վիճակում է:

Կոլտնտեսությունների մեծ մասում գոմաղբն
անկարգ ու մանր կույտերով և թափթփվում, և անձրևի
ու ձյան ջրերը լվանում են: Երջանի համարյա բոլոր
կոլտնտեսություններում ել կոյանոց ու կոյաջրանոց
չկա: Միայն 36 թվին վորոշ կոլտնտեսություններ
սկսեցին կոյանոց-կոյաջրանոցներ պատրաստել:

Կոյաջուրը, խոտհարքների համար թանդաղին այդ
պարարտանյութը, բոլորովին չի հավաքվում ու չի
գործածվում պարարտացման համար:

Խոտհարքների պարարտացման համար չի գործած-
վում նաև աթարի մոխիրը, վոր ամեն մի կոլտնտե-
սության մեջ ահագին քանակությամբ ստացվում է:

Հաշվի առնելով գոմաղբով ու կոյաջրով պարար-
տացնելու բացառիկ նշանակությունը խոտհարքատե-
ղերի բերքատվության բարձրացման գործում ՀԿ(Բ)Կ
ԿԿ Պիհումը 36 թ. սեպտեմբեր ամսին վորոշում և
կայացրել 37 թվին յուրաքանչյուր անասնապահական
կոլտնտեսության մեջ պարտադիր կեպով կոյաջրանոց-
ներ ու կոյանոցներ պատրաստելու մասին,

«37 թվին մասսայական միջոցառումներ վիրառել
արոտավայրերի ու խոտհարքների բարելավման ուղղու-

Քյամբ, գործադրելով մի շարք ազգութեական բրիգադները, միջոցառութեաներ — քարերից մաքրելը, ձանապահներ բացելը, ջրելատեղեր, ջրափոսեր և վոռոգման ցանց կառուցելը, ռացիոնալ արոտ կազմակերպելը, վասակար խոտերն ու մոլախոտերը փոչնչացնելը, ամեն մի անասնապահական կոլտնտեսության մեջ անպայման կոյաջբանոցներ ու կոյանոցներ պատրաստելը «[ՀԿ(Բ)կ Կկ Պինումի վորոշումից՝ անասնապահական կոլտնտեսություններն ամրապնդելու միջոցառութեաների վերաբերյալ 18—21 սեպտեմբերի 1936 թ.]:

Գոմազբի տնտեսությունը կարգի բերելը և խոտհարքատեղերը պարարտացնելու համար գյուղատնտեսական բոլոր տականքներն ու թափթփուկները հավաքելու և ոգտագործելու գործը կազմակերպելը մարդագետիների բերքատվությունը բարձրացնելու, հետեւապես և անասնապահությունը — վոր շրջանի գյուղատնտեսության հիմնական առաջատար ճյուղն և հանգիստանում — կերպ ապահովելու գործում հսկայական նշանակություն ունի, ուստի և այս հարցին շրջանի կուռակցական, կոլտնտեսական, հողային, արհմիութեանական և զիտահետապոտական կազմակերպությունները բացառիկ ուշագրություն պետք է դարձնեն:

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՄԱԶԲ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՅԵՎ ՊԱՀԵԼՈՒ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Մինչև 36 թիվը վերջնականապես լուծված չեր այն հարցը, թե անասնապահական բրիգադներն են պատասխանառու հանդիսանում գոմազբը հավաքելու

և պահելու համար, թե՛ գաշտավարական բրիգադները, 1935 թվի գեկտեմբերի 27-ին Միութենական Հողագործի հաստատած հրահանսկն անհրաժեշտ պարզություն ու հստակություն և մտցրել կոլտնտեսություններում գոմազբ հավաքելու և պահելու կազմակերպական հարցերի մեջ:

1. Գոմազբ հավաքելու, պահելու և գործածելու հարցերը կոլտնտեսության արտադրական պահանի մեջ առանձին բրիգադների համար պարզ արտահայտված արտադրական խնդիրների բնույթ պետք է կրեն:

2. Կոլտնտեսության վարչությունը մի գլուխ խոշոր և մտնը անասունի աղբ հավաքելու համար անասնապահական բրիգադների համար կայան առաջարկանք և սահմանում:

3. Մի գլուխ անասունի աղբ հավաքելու նորմաները սահմանվում են հաշվի առնելով ցամքարի՝ քանակն ու վորակը և անասունի մասրային պահպանման շրջանի ակտությունը:

4. Մի գլուխ յեղջերավոր անասունի աղբ հավաքելու համար սահմանվում են հետևյալ նորմաները:

Մասրային շրջանի յեղջերությունը

Մուրային պահպանման շրջանում հավաքելիք գոմազբի քանակը

200 որ

6 տոնն

180 >

5 >

150 >

3,5 >

Մյուս տեսակի անասուններից հավաքած գոմազբը հաշվարկելիս կարելի յէ նկատի ունենալ հետևյալ

հարաբերակցությունը. մի գլուխ խոշոր անառունին ազբ հավաքելու տեսակետից համապատասխանում է 1,5 բանող ձին, 2 գլուխ մինչև 2 տարեկան մատղաշը, 3—5 գլուխ հորթը և 10 վոչխարը:

5. Անասնապահական բրիգադների պարտականության մեջ ե մտնում վոչ սիայն աղբ հավաքելու պլանի կատարումը, այլև կոյանոցներում այն դարսելն ու ինսամելը:

6. Դաշտավարական բրիգադների բրիգադիները պարտավոր են գոմաղբը դաշտ տանելուց առաջ անասնապահական բրիգադներից այն ընդունել հատուկ արձանագրությամբ՝ նշելով գոմաղբի քանակն ու վորակը:

7. Դաշտում գոմաղբը կանոնավոր պահելու պատճենատվությունը գրվում ե դաշտավարական բրիգադի բրիգադինի վրա: Բացի այդ, դաշտավարական բրիգադը պարտավոր ե ցամքարի համար բավականաշափ տորֆ ու ծղոտ հավաքել և պարարտացման համար ոգտագործել գյուղատնտեսության բորոր տեսակի տականքները՝ սիրոսի մնացորդը, փուած ծղոտը, աթարի մոխիրը և այլն:

8. Կոլտնտեսության վարչությունը նախորոք մշակում է գոմաղբ և կոյաջուր հավաքելու արտադրական առաջարկանքները քանակապես ու վորակապես կատարելու և գերակատարելու համար անասնապահական բրիգադներին վարձատրելու սիստեմը Պետք ե նախատեսվի նաև արտադրական առաջարկանքները չկատարելու համար արվելիք զեղչի չափը:

9. ՄՏԿ-ների գիրեկատորներն իրենց գյուղատնտեսների միջոցով ինստրուկտաժ և հոկողություն

պետք ե կազմակերպեն ՄՏԿ-ների սպասարկած կոլտնտեսություններում գոմաղբն ու կոյաջուրը հավաքելու և պահելու վերաբերյալ բոլոր տեսակի միջոցառությները կիրառելու համար:

10. Երչնողբաժնի վարչին ու շրջնողբաժնի գյուղատնտեսները ՄՏԿ-ների սպասարկած կոլտնտեսություններին մանրամասն հրահանգ պետք ե տան գոմաղբն ու տեղական մյուս պարարտանյութերը հավաքելու և պահելու հարցերի վերաբերյալ և ամսոջ շրջանում այդ գործի վրա պետական վերահսկողություն սահմանեն:

ՑԱՄՔԱՐՆ ՈՒ ԻՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՄԱՂԲ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Ստացվող գոմաղբի քանակն ու վորակն առաջին հերթին կախված է գործածվող ցամքարի քանակից: Ցամքարը պահաս լինելու գեղքում ահագին քանակությամբ կոյաջուր (մեզ) և փշանում, և գոմաղբը բաղկացած է լինում գլխավորապես անասունների պինդ կղկղանքից: Այդպիսի գոմաղբի սննդաբար տարրերը հեշտությամբ կորչում են և նրանց մի մասը բույսերին քիչ և մատչելի: Խոտհարքներին տված այդպիսի գոմաղբը դանդաղ և քայլքայվում և նրա պարարտացնող ազդեցությունը ցածր է: Կովի անցամքար աղբը շատ ջրիկ և կոյանոցներում կանոնավոր ծալք գնել չի կարելի: Հետեապես բարձրութակ գոմաղբ շատ ստացվելու համար առաջին և անհրաժեշտ պայմանն ամբողջ անասուններին բավակաչափ ցամքարանյութով ապահովելուն ե:

2. Հրաշալի ցամքարանյութը և առքիք, վոր աչքի

յե ընկնում կլանելու մեծ ընդունակությամբ և գոմազրը պահելու ժամանակ կրծատում և սննդարար նյութինքի կորուստը:

Տորֆը վորքան լավ չոբացված՝ լինի, այնքան լավ ցածքար կտա:

3. Ստեփանավանի շրջանում, մանավանդ Կալինիոյի յենթաշրջանում, տորֆային ճահիճներ շատ կան, վորոնք անասնոցներից հաճախ մի քանի հարյուր մետրի վրա յեն ընկած և տառացիորեն ցամքարի անսպառ պաշար են հանդիսանում: Տորֆից ցամքար պատրաստելու գործին ամենալուրջ ուշադրություն պետք ե գարձնեն Ստեփանավանի շրջանի բոլոր կուտնածությունները, մանավանդ Կալինիոյի յենթաշրջանը, վորոնք ցամքարի մեծ պակաս են դում:

4. Լավ ցամքարանյութ ե նաև աշնանացան ու գարնանացան հացարույսերի ծղոտը: Ավելի նպատակահարմար ե ծղոտն ողտագործել 20—25 ամ յերկարությամբ կտրտած, վորն անասունների մեզը լավ և կլանում և զգալի չափով ավելացնում ե գոմազրի քանակը: Կոտորած ծղոտով պատրաստած գոմազրն ավելի պինդ ե գարսվում և խոտհարքների յերեսը հավասարապես շաղ դալիս:

ԿՈՅԱՆՈՒԹ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

1. Յուրաքանչյուր անասնոցին, գոմին կամ փարախին կից կոյանոց պատրաստելը պարտազիր ե: Գոմազրը կանոնավոր պահելու համար ամենեին ել պետք չե բարդ, թանգ արժեցող կոյանոց պատրաստել:

2. Յեթե գետնաշրերը հողի յերեսին չեն մոտե-

նում, այն դեպքում ավելի լավ ե փոսացրած կոյանոց պատրաստել Փոսի խորությունը մի մետրից ավելի չպետք ե լինի: Ամենահարմար խորությունը $\frac{1}{2}$ կամ $\frac{3}{4}$ մետրն ե:

3. Ցածր տեղերում, վորտեղ գետնաշրերը հողի յերեւմն մոտ են, կոյանոցները կարելի յե գետնի յերեսին պատրաստել: Այս նպատակով կոյանոց պատրաստելու աեղում հողի վերին շերտը 15—20 ամ խորությամբ վերցնում են: Հանած հողը հավաքում են կոյանոցի յեղերքին:

4. Կոյանոցի պատերը քարից են ⁹ պատրաստում կավի կամ կրի շաղախով: Յեթե, կոյանոցի հասակը ջուր չի ծծում, պետք ե հարթել ապա ծածկել 8—10 ամ հաստությամբ ավազի շերտով և խճել: Յեթե կոյանոցի հաստակը ջուր ե ծծում, կավով կամ ցեմենտով պետք ե պատել և գարձնել անթափանց: Կոյանոցի յերկու կողմից 2,5—3 մետր լայնությամբ սալահատակած ձանապարհ պետք ե պատրաստել:

5. Կոյանոցի չափը վորոշվում ե, նայած թե գոմազրը վորքան հաճախ ե դաշտ տարվում, նայած մոռրային պահպանման շրջանի յերկարության և անասունների թվին: Հաշվարկելիս պետք ե նկատի ունենալ, վոր մոռրային պահպանման շրջանի սկզբից մինչեւ գարնանը դուրս տանելը, այսինքն՝ մոռավորապես մինչև փետրվար հավաքվող գոմազրը միանգամայն կարողանա տեղավորվել կոյանոցում, գոմազրը 1,5—2 մետր հաստությամբ պինդ ծալք դնելով: Մի քառակուսի մետր պինդ ծալք դրած թարմ գոմազրի մոռավոր քաշը հավասար ե 500 կգիսկ քայլքայլածինը՝ 700 կգ:

6. Մի գլուխ լարշու յեղաբավոր անասունի համար գոմաղբանոցի մոտավորապես անհրաժեշտ տարածությունը հետևյալն է:

Մոռրային պահպանման շրջանի
յերկարությունը

Մոռրային պահպանման շրջանում
հավաքած գոմաղբի
քանակը

1 գլուխ իողոր յեղաբավոր անասունի
համար պահանջվող
կոյանոցի տարածությունը

180 որ

5-4 տոն

3-3,5 քմ

160 »

4-3 »

2,5-3 »

150 »

3-2,5 »

2,5 քմ դոչ

պակաս

Մյուս տեսակի անասունների համար հաշվելիս պետք ե ոգտվել վերը բերած հարաբերակցությունից:

7. Կոյանուրը հավաքելու համար անհրաժեշտ ե էլուանոցին կից հոր պատրաստել: Հորի այն մասի ծավալը, վոր կոյանոցի հատակից ցածր ե ընկած, 100 քմ կոյանոցի համար 0,75 խմ պակաս չպետք ե լինի: Հորի պատերն ու հատակը քարից ու կրի շաղախով են պատրաստում, յեթե հնարավոր ե յերեսը ցեմենտ են քաշում:

Կոյանուրն ազուր կորցնելուց կամ ձմեռը սառչելուց զերծ պահելու համար հորի բերնին պինդ փակող փայտե դուռ են դնում:

8. Կոյանորի համար հոր պատրաստելիս կոյանոցի հատակը գեպի հորը յուրաքանչյուր մետրին 2 ու թեքություն պետք ե ունենա. հորն ամենից հարմար է տեղափորել կոյանոցի յերկար կողմերից մեկի մեջ տեղը, այնպես, վոր հորի մեկ կողմը համընկնի կոյանոցի պատի հետ, իսկ մյուս յերեք պատը կոյանոցի տարածությունից գուրս մնան: Կոյանորի պատերի մեջ, կոյանոցի հատակին հասնող տեղում ցանցավոր անցքեր են թողնվում՝ կոյանուրը հոսելու համար:

9. Կոյանոցները պատրաստվում են անասուններից և բնակելի շենքերից բավականին հեռու (գոչ պակաս 50—100 մետր) և քամի փշող կողմում. ցանկալի յև այս նպատակի համար ողտագործել բնական թեքությունները, վորպեսզի անասունից գոմաղբը գուրս տանելու և կոյանոց լցնելու գործը հեշտանա:

10. Վորպես ժամանակավոր միջոց, մինչև կոյանոց պատրաստելը գոմաղբը պետք ե պահպի ծակը գրված՝ գոմաղբի պահելու համար հատկապես մաքրված ու պատրաստված հարթակի վրա:

ԿՈՅԱՆՈՐ ՀԱՎԱՔԵԼՆ ՈՒ ՊԱՀԵԼԸ

1. Մաքրվող գոմերում, խողանոցներում ու վարախներում ամբողջ մեղքը ցամքարի մեջ չի ծծվում: Զրիկ գոմաղբապարատանյութի այս ամենահարուստ և գնահատելի մասն ամբողջապես պետք ե հավաքվի և գործածվի պարարտացնելու համար:

2. Ցամքարի մեջ չծծվող մեղքի միջին նորմաները մի կթի կովի համար ամբողջ մոտավորին պահպանման շրջանում մոտավորապես հետևյալն են:

Մոռրային պահպանման 1 կթի կովի տված մեղի շրջանի յերկարությունը քանակը քմ

240 որ	2,5
220 »	2,0
200 »	1,8
180 »	1,5

Մյուս տեսակի անասունների համար հաշվարկե-

լիս նկատի կարելի յէ ունենալ հետեւյալ հարաբերակ-
յությունը. մէ կթի կովին համապատասխանում ե 3
բանող ձին; 3 գլուխ մինչև 2 տարեկան մատղացը և
10—15 հորթը:

3. Կոյաջրանոցների խորությունը 2 մետրից
ավելի չպետք ե լինի. Կոյաջրանոցի պատերը պատ-
րաստվում են քարից, ցեխի կամ կրի շաղախով, իսկ
տակը սալահատակվում ե: Վորպեսզի կոյաջրութը հողի
մեջ չծծվի և կոյաջրանոցը գետնաջրեր ու անձրեա-
լիք չցցին, կոյաջրանոցի հատակի ու պատերի յե-
րեսը ցեմենտ են քաշում:

4. Կոյաջրանոցի ծածկն ամուր պետք ե լինի և
կոյաջրութը սաւչելուց լավ պաշտպանի: Ծածկի մեջ
մեկը մյուսից 30—40 սմ հեռու յերկու կափարիչ
ունեցող գնակ և թողնվում:

5. Կոյաջրանոցի ծորերում լավ պահելու համար ան-
հրաժեշտ ե ամուր կափարիչներ ունենալ Կոյաջրա-
նոցների կափարիչների չնչին անցքերն անդամ աղոտի
մեծ կորսորի պատճառ են գառնում:

6. Կոյաջրութն անասնոցից կոյաջրանոց տանող
խողովակները պետք ե գրվեն գետնի սառչող շերտից
յած, իսկ յեթե այդ անհնար ե, ապա խողովակները
սաւչելուց պետք ե պաշտպանել վորեն տաքացնող
նյութով, որինակ՝ սղոցի թեփով և կավով:

7. Կոյաջրանոցներն անասնոցներին մոտիկ են
պատրաստվում, բայց շենքի պատերից 3—5 մետրից
վոչ պակաս հեռավորության վրա:

ԿՈՅԱՆՈՑԻՄ ԳՈՄԱՂԲ ԴԱՐՍԵԼՆ ՈՒ ՊԱՀԵԼԸ

1. Գոմաղբն ամեն որ պետք ե կոյանոց լովի և
առանձին ծալքեր գրվի:

2. Առաջին ծալքը գրվում ե կոյանոցի նեղ կող-
մերից մեկի յերկարությամբ: Ծալքի լայնությունը
2 մետրից պակաս չպետք ե լինի: Գոմաղբը ծալքի
մեջ և լցվում հետզհետե, առանձին մասերով: Որպական
ստացված գոմաղբը ծալքի համար նախատեսված
տարածության մասերից մեկում հաստ շերտով (0,5
մետրից վոչ պակաս) մեկեն գարսվում և կոխկրճելով
• լավ պնդացվում ե: Առաջին շերտի վրա նույն ձեռք
դարսվում ե յերկրորդ շերտը, հետո՝ յերրորդը, մինչեւ
վոր պնդացրած վիճակում ծալքի բարձրությունը
հասնի 1,5—2 մետրի: Հետո սկսում են լցնել ծալքի
մյուս մասը և այլն:

3. Կոյանոցի ամբողջ կարծ պատի յերկարու-
թյամբ գոմաղբի առաջին ծալքը կատարյալ բարձրու-
թյամբ դարսելուց և այն խնամքով պնդացնելուց
հետո միայն սկսում են գոմաղբի յերկրորդ ծալքը
դնել: Գոմաղբի յերկրորդ ծալքը նույնպիսի լայնու-
թյամբ (2 մ վոչ պակաս) և բարձրությամբ (1,5—2 մ)
կիզ պետք ե կպչի գոմաղբի առաջին ծալքին: Նույն-
պես պետք ե վարվել նաև գոմաղբը հետագա ծալք
դնելիս, այնպես, վոր գոմաղբի բոլոր ծալքերը միասին
գոմաղբի մի հոծ մասիկ դառնան: Կոյանոցում գո-
մաղբի նոր ծալք դնել չի կարելի, մինչեւ վոր նախկին
ծալքն ամբողջ լայնությամբ ու բարձրությամբ
չդրվի:

4. Գոմաղբը սացիոնալ կերպով պահելու հիմնա-
կան պայմանը ինամքով պնդացնելն ե: Ցեթեւ պահելու
ժամանակ գոմաղբը սաստիկ տաքանա, նշանակում է:
գոմաղբը բավականաչափ լավ պնդացած չի, եթառ
պետք ե հետեւ գոմաղբի ներմությանը: Հենց վոր

գոմաղբն սկսկում և ուժեղ կերպով տաքանալ, ան-
ձիջապես մի տնօտք ել պետք և խնամքով պնդացնել:
Այսպիսով միայն կարելի յե սովահովել գոմաղբը
կանոնավոր պահելու գործը և կրծատել գոմաղբի
ամենագնահատելի տարրերի՝ ազոտի և ֆոսֆորաթ-
թվի կորուստը:

5. Տնտեսության մեջ ստացված ամբողջ գոմաղբը
կոյանոց պետք և մտնի: Յերեկք չի կարելի թույլ
տալ, վոր գոմաղբը մանր կիսուկներով թափթփվի
անասնոցի շուրջն ու այլ տեղեր:

Առանձին անսառների վարակիչ աղբը պետք է
վոչչացնել այլինով կամ հողի տակ թափերով:

6. Հասած գոմաղբը, վոր կարելի յե խոտհարք-
ներ տանել այն գոմաղբն և, վոր մուգ-կինամոնա-
գույն և դառնում: Այսպիսի գոմաղբի մեջ ծղոտը
թեև պահպանվում և, բայց հեշտությամբ քրքը-
վում ե: Կանոնավոր դարսելու և կանոնավոր պահելու
դեպում գոմաղբը 3—4 ամսից հետո միանդամայն
հասունանում ե:

ԶՄԵՐԸ ԴԱՏԸ ՏԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՍԿ ԳՐՄԱՆՔԸ ԽՈՏՀԱՐՔՈՒՄ ՊԱՏԵԼԸ

1. Գոմաղբը ձմեռը գոմից անմիջականորեն
խոտհարք փոխադրելու գեպքում այնտեղ մեծ ու
կանոնավոր՝ 3,5—4 մետրից վոչ պակաս լայնությամբ
և 1,5—2 մետր յերկարությամբ ու պնդացրած ծալքեր
պետք և դրվեն:

Ծալքը հետզհետե մասշմաս լցվում, լրիվ բարձրու-
թյան և հասցվում և խնամքով պնդացվում:

2. Հատուկ ուշադրություն պետք և դարձնել,
վոր խոտհարք տանելու և ծալք դնելու ժամանակ

գոմաղբը չառչի, վորի համար պետք և լրիվ ծալքն
ամենակարճ ժամանակում (2—4 որում) դրվի: Մինչեւ
վոր առաջին ծալքն ամբողջ յերկարությամբ, լայնու-
թյամբ ու բարձրությամբ լրիվ չդարսվի, նոր ծալք
չպետք և սկսել:

3. Գոմաղբի ծալքի չափը կախված է գոմաղբը
կրելու համար նախատեսված ժամանակից: Գարնայ
ազգելու ժամանակ գոմաղբի ծալքերը 30—40 տոննից
ավելի չպետք և լինեն, ամեն մի հեկտարին մոտա-
վորապաս մի ծալք և դրվում:

Աշնանն աղբելու ժամանակ գոմաղբն զգալի
չափով մեծ ծալքեր կարելի յե գնել (1 ծալքը 4—5
հեկտարի համար կամ 120—150 տոնն գոմաղբը) վորով-
հետև այդ պայմաններում չոր խոտհարքի միջով գո-
մաղբ կրել մեծ դժվարությունների չի հանդիպի, իսկ
գոմաղբի վորակն զգալի չափով բարձրանում է:

ՄՈԽԻՐ ՀԱՎԱՔԵԼՆ ՈՒ ՊԱՏԵԼԸ

1. Աթարի և փայտի մոխիրը գնահետելի պա-
րարտանյութ ե: Կոլտնտեսության մեջ ստացվող վողջ
մոխիրը պետք և հավաքել պարարտացման համար և
յերեք թույլ չտալ թափթփված մնա կույտատեղերուն
Ամեն մի կոլտնտեսություն մոխիրը հավաքելու մասին
իր արտադրական պլանով կայուն առաջադրանք պիտք
և ունենա: Մոխիր հավաքելու գործին պետք և մաս-
նակից գարձնել առաջին հերթին կանանց — կինն այս
գործում մեծ գեր և խաղում: Այս գործին մասնակից
պետք և դարձնել վողջ գյուղական հասարակությունը,
գլուցները, պիտներական, կոմյերիտական և այլ կադ-
մակերպությունները:



2. Մոխրի, վորպես պարաբտանյութի, վորակն ամբողջովին կախված է այն բանից, թե ինչպես է պահպում։ Յեթե մոխրի վրա անձրեաջուր ընկնի, միջի ամբողջ կալիումն, մասամբ ել ֆուֆորաթթուն, կլվացվի, տուանց վորի մոխրի, վորպես պարաբտանյութի, արժեքը բոլորովին կորչում է։ Ուրեմն, մոխրի պահելիս անձրաժեշտ պայմանն այն է, վոր մոխրի պահող շենքը վոչ անձրևաջուր անցկացնի, վոչ ել գետնաջուր։

3. Ամեն մի կոլտնտեսական ընտանիք մոխրը պետք է հավաքի, լցնելով չարդախի տակ, նկուղ կամ անձրեից պաշտպանված մի ուրիշ շենք, վաղորոք պատրաստած արկղի կամ ցանկապատի մեջ։ Հրդեհից խուսափելու համար խիստ զգուշ պետք է լինել վոր մոխրի հետ վառ ածուխ չգնա, և ափելի զգուշ լինելու համար մոխրը պետք է լցնել յերկաթե դույլի մեջ, վոր սառչի, և բոլորովին սառչելուց հետո միայն կարելի յե լցնել մոխրի պահելու համար պատրաստած շինության մեջ։

4. Կոլտնտեսության վարչությունը դաշտավարական բրիգադներից մոխրի հավաքողներ պետք է նշանակի, վորոնք 10—15 որը մեկ անգամ կանոնագոր կերպով պետք է շրջեն բոլոր կոլտնտեսականների բակերը և մոխրը հավաքեն հատկապես հարմարեցված արկղավոր սայլերի մեջ և տանեն լցնեն ընդհանուր մոխրանոցը։

5. Մոխրի պահելու համար կոլտնտեսությունը պետք է ունենա մի կամ մի քանի հատուկ շենք՝ պարագ, պահեստ կամ չարդախ։ Հատուկ պատրաստած շենք չեղած դեպքում մոխրը կարելի յե պահել փսսի մեջ, վոր անպայման բարձր տեղ պետք է փորվի և

հատակն ու պատերը կավով պետք է ծեփվեն։ Անձրեվից ու քամուց պաշտպանելու համար փոսի շուրջը պատեր պետք է դրվեն ու վրան ծածկվի։ Մոխրանոց պատրաստելիս նկատի պետք է ունենալ, վոր մի տոնն մոխրը, վորպես կանոն, 1,5—2 խմ տեղ և բռնում։

ԽՈՏՀԱՐՔԵՆԵՐ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Բոլոր խոտհարքները պետք է բաժանվեն այնքան մասերի, վորքան կոլտնտեսության մեջ դաշտավարական բրիգադ կա։ Մասերը պետք է ամբոցվեն բրիգադներին։

2. Ամեն մի կոլտնտեսություն մոռւրային պահապանման շրջանի համար կազմած պլանի և անտանապահության զարգացման հետագա հեռանկարների հիման վրա, գյուղատնտեսի ողնությամբ պետք է սահմանի իր խոտհարքները պարարտացնելու տարածությունն ու հերթականությունը։

3. Ամեն մի դաշտավարական բրիգադ պետք է ունենա խոտհարք պարարտացներու տարեկան պլանային առաջադրանք, վորակ ցույց են տրված աշխատանքը կատարելու որացուցային ժամկետները։

4. Խոտհարք պարարտացներու արտադրանքի նորմաներն ու աշխատանքի գնահատությունը պետք է մշակված ու հաստատված լինեն կոլտնտեսության ընդհանուր ժողովի կողմից։

5. Խոտհարք պարարտացներու առաջադրանքը կատարելու, ինչպես և խոտհարքները բարելավելու մյուս միջոցառումների համար բրիգադիրը նույնպիսի պատասխանատվություն ունետք է կրի, ինչ դաշտավարության համար։

6. Կոլտնտեսության արտադրական պլանով աշխատքի հատուկ փոնդ պետք ե առանձնացվի խոսհարքները պարարտացնելու աշխատանքի համար: Այս փոնդը ծախսելու պատասխանատուն կոլտնտեսության նախագահն է:

Առաջիկա տարիների համար կոլտնտություններին կարելի յե առաջարկել, զոր խոտհարք պարարտացնելու աշխատանքների համար մի գլուխ խոշոր անսատունին 2—3 աշխոր ոգտագործեն, ընդվորում համայնացված անսառւնների համար արվող ծախսը կոլտնտեսության հաշվին պետք ե լինի, իսկ անհատական ոգտագործման մեջ յեզած անսառւնների համար՝ կոլտնտեսականների:

ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՅՑՈՒԹ ՏԱԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Գոմաղբն ամբողջ խոտհարքի վրա հավասարապես բաշխելու համար պարարտացվող խոտհարքը մասերի պետք ե բաժանել այն հաշվով, զոր ամեն մի մասի համար՝ 5—10 սայլ գոմաղբ տարվի:

2. Գոմաղբը կոյանոցից կամ ծալքից պետք ե հանվի այն կարգով, ինչ կարգով լցվել ե, ընդվորում գոմաղբը պետք ե կտրատվի ուղղաձիգ շերտերով՝ վերկացման մինչև ներքեւ: Գոմաղբն այս կարգով տանելն անհրաժեշտ ե այն պատճառով, զոր խոտհարքի տարբեր մասեր միանման վորակի գոմաղբ ստանան:

3. Գոմաղբը խոտհարք պետք ե տանել վաղ գարնանը, ապրիլի վերջին և մայիսի առաջին տասնորյակին, կամ աշունը, խոտը քաղելուց հետո՝ սեպտեմբերին, հոկտեմբերին և նոյեմբերի սկզբին: Ցեղեգարնան ուշացել են գոմաղբը խոտհարք տանել ամե-

լի լավ և թողնել աշունը՝ խոտհնձից հետո տանել: Այդ ժամանակ գոմաղբը հաջորդ տարվա համար կկարողանա բոլորովին փակել: Դարումն ուշ պարարտանյութ տալը բերքի զգալի բարձրացում չի տալիս, իսկ չփառ գոմաղբը խանգարում և իստ հավաքելուն: Աշունը, մանավանդ հոկտեմբերին և նոյեմբերի սկզբին, դաշտավարական բրիգադներն ավելի ազատ են և խոտհարքները սարարտացնելու՝ գործին ավելի շատ ժամանակ կարող են նվիրել առանց դաշտային շտապ աշխատանքները վասելու:

4. Խոտհարքին գոմաղբ պետք ե տալ յերեք կամ չորս տարին մեկ անգամ, հեկտարին 30—40 տոննի հաշվով:

5. Խոտհարք տարած գոմաղբը հավասարապես շաղ ե տրվում ուղղակի սայլի վրայից: Գոմաղբը տանելուց մի քանի որ հետո, ավելի և հավասարապես բաշխելու համար՝ ամբողջ պարարտացված տարածությամբ խոտհարքը պետք ե տափանել խուրճ կապած ճյուղերով կամ ատամները դեպի վեր դարձած «զիգ-զագ» փոցինով: Այս տափանն ավելի լավ և անձրևից հետո անել:

6. Խոտհարքները պարարտացնելիս կարելի յե գոմաղբը սայլից առանց ձեռքով շաղ տալու յօլա գնալ: Այս աշխատանքը մեքենայացրած ձեռվ կարելի յե կատարել Գոմաղբացիր հատուկ ապարատ ունեցող սայլեր կան, վորոնք գնալու տեղն ուղղակի սայլից գոմաղբն այնպես են շաղ տալիս, զոր ձեռքով յերեք չի կարելի անել: ՄՏԿ-ներն իրենց արամաղբության տակ գոմաղբացիրներ պետք ե ունենան:

7. Գարունը խոտհարքներին գոմաղբ տալիս, յերբ

արդեն խոտն զգալի չափով բարձրամում է, մոտավորապես մայիսի կեսերին, լավ կլինի խոտհարքները ձիռ փոցի գցել և գոմաղբի խոշոր մնացորդները հավաքել, վոր խոտ քաղելու ժամանակ չխանգարեն:

8. Կոյաջուրը խոտհարքներ տանելու համար պետք է ունենալ տակառներ հատուկ հարմարանքներով՝ կոյաջուրը հավասար կերպով շագ տալու համար: Կոյաջուր կրելու տակառներ հիմա մեր արդյունաբերությունը պատրաստում է և ՄՏՀ-ներում կան: Հաջողությամբ կարող ե ոգտագործվել կոյաջուրը հավասարապես շաղ տալու հատուկ հարմարանք ունեցող 30—40 գույլանոց սովորական տակառը, վոր առանց հատուկ չարչարանքի կարող ե պատրաստել ամեն մի կոլտընտեսական ատաղծագործ կամ դարբին:

9. Խոտհարքներն ավելի լավ ե կոյաջուր պարարտացնել վաղ գարնանը: Վորպեսզի կոյաջուրը խորարտացնել վաղ գարնանը: Վորպեսզի կոյաջուրը չայրի, սովորաբար խորհուրդ են տալիս կոյաջուրը խոտհարք տանել կիսով չափ ջուր խառնած (մի գույլ կոյաջրին մի գույլ ջուր): Վորովհետև Ստեփանավանի գարունն անձրևային և ու ամպամած, կոյաջուրը վազ գարնանը կարելի յե խոտհարքներին տալ առանց ջուր խառնելու:

10. Մի հեկտարին պետք է տալ քառասուն գույլանոց 25—30 տակառ չուր չխառնած կոյաջուր: Խոտհարքները կոյաջրով պարարտացնում են 3—4 տարին մեկ անգամ:

11. Խոտհարքները մենակ մոխրով պարարտացնելը խոտի բերքի զգալի բարձրացում չի տալիս: Իսկ մոխրը կոյաջրի հետ խառը տալը բերքի մեծ բարձրացում է տալիս: Այս պատճառով ել նպատակահար-

մար և մոխրը կոյաջրի հետ խառը տալ խոտհարքներին: Մի հեկտար խոտհարքին 3—4 տարին մի անգամ 5—15 ցենտներ մոխրը պետք է տալ Խոտհարքներին մոխրը կարելի յե տալ գարունը և աշունը.

12. Մոխրը ձեռքով տալու դեպքում անհրաժեշտ է ապահովել խոտհարքների յերեսն այն հավասարապես շաղ տալու գործը:

Վորովհետև մոխրը սակատիկ փոշի յե արձակում լավ կլինի հողի հետ խառը և քամի չեղած յեղանակին շաղ տալ: Խոտհարքներին մոխրը տալու գործը կարելի յե մեքենայացնել աղբացիրների (հանքային պարարտանյութեր ցրող) միջոցով: Մոխրն աղբացիրներով շաղ տալու համար ձարեւ մաղով կամ քարմաղով վաղորոք պետք է մաղել՝ այն խառնուրդը ջուրելու համար, վոր ցրող ապարատի միջով անցնելիս կարող ե խանգարել:

4074



Մասն. խմբ.՝ Ն. Մարտիրոսյան

Թարգմ. և սրբազրիչ՝ Գալ. Հակոբյան

Տեխ. խմբ. Խ. Այվազյան

Դրամիթի լիազոր № 1178 հրատ. 428, պատ. 395, տիրաժ 500

Հանձնված և արտադրության 23 ապրիլի 1937 թ.

Ստորագրված և տպագրելու 13 մայիսի 1937 թ.

Դյուլհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0293006

ԴԻՆԸ 25 ԿՈՊ.

252

15344



С. К. ПАВЛОВИЧ

О накоплении, хранении и применении местных
удобрений в Степанаванском районе

Сельхозгиз,

Ереван,

1937